ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՉԻՎԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

հեռ./0281/66-383 «16» մարտի-2016թ.

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N - 1

2016թվականի մարտի 16-ին Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Չիվա համայնքում տեղի ունեցավհամայնքի ընդհանուր ժողով:Ժողովին ներկա էին համայնքապետարանի աշխատակազմի անդամները,ավագանու 4 անդամ,համայնքի 53 բնակիչ:
Մարզպետարանից ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ՝պարոն Ն.Սիմոնյանը:
Ժողովը վարեց համայնքի ղեկավար Նաիրի Սարգսյանը.
Քարտուղարեց՝համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝Հասմիկ Սարգսյանը

Օրակարգում

2015թվականին կատարած աշխատանքների մասին հաշվետվություն:
/զեկ. Համայնքի ղեկավար Ն.Սարգսյան/
Համայնքի քառամյա ծրագրի կատարման մասին իրազեկում:
Նշվեց այն մասին,որ 2015 թվականին բյուջեի եկամտային պարտավորությունները կատարվել են՝

Հողի հարկ 101%
Գույքահարկ 115 %
Տեղական տուրք 110%

2015թ.-ի ընթացքում բյուջեից տրամադրվել է ֆինանսական օգնություն սոցիալապես անապահով տնտեսություններին ՝ 30 000-ական դրամ է տրամադրվել նորածին երեխա ունեցած մայրերին,
20 000-ական դրամ է տրամադրվել հարազատի մահվան դեպքում:
Ժամանակին մաքրվել-բարեկարգվել են ոռոգման ջրի առուները, կատարվել են նախապատրաստական աշխատանքներ,բնակիչների հացահատիկի հունձը ճիշտ կազմակերպելու բերքի իրացման համար:
Գարնանը և աշնանը կատարվել է ներհամայնքային ճանապարհների խճապատում:
2015թվականին դոնոր կազմակերպությունների կողմից և համայնքապետարանի համաֆինանսավորմամբ՝ կառուցվել է կոյուղագիծ, ջրամաքրման /սեպտիկ/ հոր և ոռոգման ջրագիծ:
Համայնքի ժողովը համայնքի ղեկավարի կատարած աշխատանքները ընդունեց ի գիտություն;

Համայնքի ղեկավար՝ /Ն.Սարգսյան/